

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1951 ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ ԹԻՒ 5-6

ԳՐԱԿԱՆ

- Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ. - Եզրիա Տէմիրճիպաշեան (շար.) 97
- ՏՈՐԹ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ. - Բարոյական ու Բժշկական Նարեկի մէջ 118
- ՄԱՌԻ ԱԹԱՆՃԵԱՆ. - Մանկաներու հովանի մէջ (ընթերցած) 127
- Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. - Մահապարտները (ընթերցած) 128
- ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ. - Իրեկուն (ընթերցած) 137

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- Փրոֆ. Վ. ԹՈՌՈՒՄԵԱՆՅ. - Հայերը և ազգայնութիւնը 108
- Prof. Marc-Antoine van den Oudenrijn O. P. - Notes sur quelques ouvrages arméniens de provenance Dominicaine (շար.) 113
- Հ. ՊՕՂՈՍ ՀԱՄԵԼԵԱՆ. - Քննական ակնարկ Հայկական վաւերացութի մը Տէրաժօր Վերան փոխման մասին (շար. և վերջ) 129
- ՏՈՐԹ. ՅՈՎՀ. ԱՐԹՒՆԵԱՆ. - Բայերու հայ աշուղներ «Բլթնի» և «Հայհամա» , «Խնձ» 138

ԳԵՂԱՐՈՒԵՍ

- ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ. - Նկարիչ-Փորագրիչ Արամայիս Աղամալեան 135
- Հ. Մ. Ճ. - Հայ նկարչուհի Օր. Մայրա Մանուկեան 139

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

- Հ. Յ. Չ. - Տեղրան Մկրտչի «Ամիտայի արձագանգներ» ապ. Նիւ Եորք 1950 141
- Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԵԼԵՄԵԱՆ. - Արշակ Աւագոյ ճանաչման «Պատմական Հայաստանի սահմանները» ապ. Գահրէթ 1950 142

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

- Տ. Տ. - † Հանգիստ հոգևոյ Մեծարոյ Մօր Թէոփիսայէ Աւետիսեանի 144

SOMMAIRE

1951 Mai - Juin N.

LITTÉRATURE

- P. Mesrop Djanachian. - Elie Dêmirdjibachian (suite)
- Dr. B. Missakian. - La morale et la médecine dans Naregh
- Marle Atmadjian. - Dans la vallée des violettes (poésie)
- P. M. Djanachian. - Les condamnés à la mort (poésie)
- Arsène Yerghat. - Le soir (poésie)

PHILOLOGIE

- Prof. V. Totomiantz. - Les arméniens et l'Impression
- Prof. Marc-Antoine van den Oudenrijn O. P. - Notes sur quelques ouvrages arméniens de provenance Dominicaine (suite)
- P. Paul Hamélian. - Critique d'un document sur l'Assomption de la Sainte Vierge (suite et fin)
- Dr. J. Artinian. - Noms arméniens des plantes: «Fenugrec», «Nigelle», «Tragopogon»

BEAUX-ARTS

- Aram Yérémiian. - Le peintre-graveur: Aram Aghamalian
- P. M. Dj. - Mlle Mayda Mendikian, peintre arménienne

RECENSION

- P. H. Tch. - «Les échos d'Amida» de Mr. Dikran Meghount, ed. 1950, à New York
- P. H. Adémian. - «Les frontières de l'Arménie historique» de Mr. Archag Alboyadjian, ed. 1950 au Caire

NECROLOGIE

- D. D. - † La mort de la Révérende Mère Théobiste Alexanian

ԲԱՉՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1951
109-րդ ՏԱՐԻ



ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ
ԹԻՒ 5-6

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԵՂԻԱ ԴԱՍԱԽՕՍ. - ՄՕՐԸ ՄԱՀԸ. - ԱԻԵԼԻՆ ՀԱՌԸ. - ԱՆԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ. - ՊԱՏԱՀՈՒՄԸ ԷԼԷՆ ՆԻՍԸՆԻ ՀԵՏ
(շար. տես բազմ. 1951, թ. 3-4, էջ 72)

Կը սկսին Եղիայի համար մեկուսացումը և առանձնութեան տարիները: 1899ին կը դադրի մտերմութիւնը Օր. Սեղրոսեանի հետ: Արդէն ասկէ տարի մը առաջ 1888-ին դադրած էին թէ՛ Գրական եւ իմաստասիրական շարժումը, որուն առաջին եւ երկրորդ տեսքերը (Յունուար - Փետրուար, Մարտ - Ապրիլ) միացեալ երկամիսներ եղան, եւ թէ՛ Երկրագունդը իր նոյեմբերի վերջին թիւով: Եղիա որ դադրեցուցած էր նաեւ իր գասախօսութիւնը Հասցիւղի Ներսէսեանին մէջ, հիմա 1889-ին կը վերսկսէր նոր կորովով կեդրոնականին մէջ շարք մը գասախօսութիւններ, աւանդելով Պատմութիւն, Իմաստասիրութիւն, Իմաստասիրութեան պատմութիւն, Պատմութեան իմաստութիւնը, Գրադիրութիւն, Գրականութեան պատմութիւն, Գեղեցկագիտութիւն, Մանկավարժութիւն, նիւթեր իր սրտին մօտ եւ իր տեսական մտքին յագուրդ տուող, ու

րոնցմով կը մոլորցնէր իր մտքին անել բաւիղներուն մէջ, լոյսի տեղ խաւար, ճշտութեան տեղ շիթ յարուցանելով մատղաշ ու հետաքրքիր իմացականութիւններու մէջ, որոնք պէտք ունէին ընդհանրական առաջնորդութիւն հաւասարակշիռ դուրսերէ: Չարմառային ու քննադատելին ո՛չ թէ Եղիան էր, այլ վարժապետին ինքնամակաւորութիւնը՝ որ Եղիայի պէս մէկուն կը յանձնէր ամէնէն փափուկ ու մտակազմութեան համար անհրաժեշտ նիւթերու աւանդումը:

Բայց Եղիա իր օրերու իմաստասէրն էր. իր համբաւը իրմէ աւելի մեծ էր: Ան իր մտքի կազմով ու հիւանդութեամբ, որուն մասնաւորութիւնը դեռ դառած չէ իր ճշգրիտ որակումը, չէր կրնար ան- չուշտ ձեւել մտքեր: Եւ ստուգել իր ազդեցութիւնը քայքայումի, յոռետեսութեան տրամադրող ազդեցութիւնը եղած է: Իր հոգւոյն ցմահ տրամաբանութեամբ, իր տեսական մտքին յագուրդ տուող, ու

հիւժած մարմնովը, դէմքին տփուռութեամբը, անժպիտ եւ ծանրաթախիծ արտայայտութիւններովը, ի՞նչ կրնար տալ դժբախտ Եղիա իր աշակերտներուն: Եւ ո՞վ դիտէ ի՞նչքան շեղումներ ներթերէն, խորին ու անհաս խորհրդածութիւններ, մտքի կայծակնացող շողջողիւններէն՝ յանկարծաթափ անկումներ, լուսեղէն սըլացումներէն՝ էջեր դէպի խրթին, անհասկնալի սահմանումներ, տառապեցուցած են աշակերտական մտքերը: Գրականութեան պատմութեան դասնթացքին, օրինակի համար, վեց ամիս ամբողջ խօսած է հնդկական դրականութեան վրայ, ու կարգացած եւ վերլուծած անոնց բոլոր կրօնական երգերը, աղօթքները, ինչպէս կը վկայեն կեդրոնականի դասախօսութեանց արձանագրութիւնները: Մակայն աշակերտները կը սիրէին զինքը եւ կը փափաքէին լսել անյադօրէն իր խօսքերը, իր դատումները. որովհետեւ իր դասերը հոգեկան հաղորդակցութեան ժամեր էին:

Որքան որ սակայն Եղիա ծանրաբեռնուած է դասախօսութիւններով, յօդուածադրութեամբ Արեւելք-Մասիս-Հայրենիք թերթերուն՝ որոնք կը դիմեն իրեն, չունի այն տենդազին զբաղումները, որ հինգ տարի առաջ կը բռնէին զինքը: Այդ բազմադրազ տարիներուն է որ ձեռքին տակ ունէր Գաղղիքեմէ հայերէն բառարան մ'ալ, զոր Գրգանի բառարան անունի տակ հրատարակեց 1888-ին Գ. Պաղտատեանի տպարանէն, եւ որուն ընդարձակը «Բառարան Պրանսերէնէ հայերէն» աւելի ուշ պիտի հրատարակէ 1896-ին:

Տենդազին աշխատանքները իր հոգեկան վիճակին փրկութիւնն էին: Հիմա այդ լաստէն գուրկ, Եղիա իր հոգւոյն ծովուն մէջ կ'ընկղմէ: 1890-1893-ի ժամանակաշրջանը աղետալի թուական մ'է արդարեւ իրեն համար: Եղիա կը զբաղի ինքնիրմով, ինքնավերլուծումով: Մանաւանդ կորստնցնելով մայրը - զոհ թողարտի վարակու-

մի մը, անցած իրեն իր քրոջ Թալուհի Ներսէսեանի դաւակէն, զոր Եղիայոս տարած էր բուժումի, - ան այլեւս խակահան Ֆաֆիլ մը դարձած է իր 39 տարեկանին, արդէն գերեզմանին հոտը առնող մտասեւեռ մենամոլութեամբը: 1890 Յունիս 31-ին է ուրեմն որ կը մեռնի իր պաշտելի մայրը. կորսնցուցած էր արդէն նախապէս հայրն ու եղբայրը, վաղամեռիկ Պօղոսը: Այն քաղցր մօրմէն մնաց անջնջլի յիշատակ մը որ կու գար մերթ ընդ մերթ տանջելու զինքը իր գուրգուրոտ հայեացքովը եւ աղբսանքովը. «Եղիա, ինչո՞ւ տխուր ես, զուարթ եղի՛ր քիչ մը»: այն մօր որ եղաւ պահապան հրեշտակ իր տառապող հոգւոյն: Մօրը մահուան անկողինը եւ սենեակը՝ անոր բոլոր առարկաներովը, մահուան պատկերով ու հոտով լի, իր խելագար երեւակայութեան թանդարանն էր, եւ եթէ բարերար ձեռք մը չգար կարդ ու կանոն դնելու հոն, մաքրելու եւ սրբելու ամէն ինչ, Եղիա տարիներով պիտի ապրէր մեռելական ստուերներու մէջ, անքուն գիշերներ հըսկելով ու պայքարելով իր զգացումներուն հետ: Այդ ցաւալեց բաժանումէն վերջ իր սիրելագոյն վայրն էր Մօտայի հրուանդանին գլուխը, ուր կը բարձրանար խոկալու անդենական մեծութիւնները, ընդլայնած անկութեան խորհուրդին մէջ, «Ներսիսայ»ի հեշտօրօր երազանքներու ծոցը, որ այլեւս փիլիսոփայական խոկում դարձած էր իր մտքին, մղձաւանջ մը իր հոգիին:

Եղիա ունէր լուսաւոր ու մռայլ պահեր: Այդ մռայլ պահերը չէին դեռ խակահան խենթութեան նշաններ, յոռետեսութեան եւ ուժգնօրէն ճնշող արտածութեան մը պահերն էին լոկ: Երբ ան 1891-ի Ձատկին Գատրգիւղի Ս. Թադաւոր եկեղեցւոյն դրան առջեւ պատառոտուն ցնցոտիներու մէջ փաթթուած, ու մտած շարքին մէջ մուրացկաններու՝ ափը կ'երկարէր ան-


ցորդներուն, մեծապէս կը վրդովէր իր բարեկամները: Բայց Եղիա այդ բանը ըրած էր՝ փորձելու համար պարզապէս իր վրայ մուրացկաններու զգայնութիւնը: Ձատկի առաւօտը, Յիսուսի խոնարհութեան եւ աղքատութեան օրինակը կը դործադրէր հրապարակաւ: Գիտակցաբար կատարուած դործ մ'էր ատիկա, զոր ինքն իսկ յայտնեց կէսօրին՝ Արիկ, էֆէնտի Ունճեանի տունը, ուր հրաւիրուած էր ճաշի, բաժակաճառով մը՝ որ հիացում ու ապշութիւն պատճառեց ներկաներուն, իր մտքին հանդարտ տրամաբանութեամբը, ուղղելով իր խօսքը աշխարհասէր հաւուսներուն, որոնք հետո էին Քրիստոսի օրինակէն: Իր այս մուրացկանութեան արարքը դիւցազնութիւն համարուեցաւ յետոյ պոլսահայ ընտանիքներու եւ եկեղեցականներու մօտ:

Այդ դէպքէն տարի մը առաջ արդէն ուրիշ ձեւով մը յուլած էր Պոլսոյ հասարակութիւնը: «Աւելին քաղը կամ Խօսուրտուր Գաաթիարախուրեան վրայ» (1890) իր ատենախօսութիւնն էր որ առիթ տուած էր այդ յուլումին: Օրթագիւղի Հոնիսի մեանց վարժարանին մէջ է որ Եղիա, խելախ ու արտառոց շեշտով մը կը յայտարարէր.

« Չանձրացած եմ գեղեցիկէն, մանաւանդ դառնացած եմ գեղեցիկին դէմ, եւ առանց բացառութեան պիտի վիրաւորեմ անտարակոյս հանդիսիս բոլոր հանդիսականներն ալ, երբ դռնեմ. կ'աւտեմ գեղեցիկը: Այլ ոչինչ աւելի բնական է սակայն քան ատել իր թշնամին. եւ իմ թշնամիս է Գեղեցիկին: Արեւս քամեց, տեսութիւնս տկարացուց. մօրե՛ց, մարե՛ց, այո՛, աչացս հոլին ու կոնակս կուզ տնկեց Գեղեցիկին: Ի՞նչ պէս: Այլ պարզապէս: Գլուխս կը կախէի ու կը կարգայի՛ ու կը կարգայի՛ ինչ որ գրականութիւնք արտադրած են ամէնէն գեղեցիկ: Գլուխս-դործոցներուն

« գլուխս ո՛րքան հնար է կը մօտեցնէի. « գեղեցիկ զործերուն աչքերս գրեթէ կը « քսուէին, ինչպէս մասունքի մը պիտի « քսուէին՝ անոր բոլոր զօրութիւնը քա- « զելու համար: Անձնիւր ընթերցման յիս « կերպարանափոխութիւն մը կը զգայի. « կը զգայի թէ կը գեղեցկանամ ես ալ: « Իրողութիւնն ա՛յն է թէ առուգութիւնս « կը կորուսանէի. մօրթս ոսկերս կը վաղ- « չէր, մազս կը ձեւակէր: Անէ՛ժք գեղեց- « կին...: Ժամ է յեղաշրջել մեր դաս- « տիարակութեան դրութիւնն, եւ կամ « բարեփոխել գէթ վայն: Պէտք է գեղեց- « կին հաւասար տեղի տալ մեր վարժա- « բանաց մէջ ճշմարտին եւ օգտակարին: « Ըսել չեմ ուզեր անշուշտ թէ գեղեցիկն « օտար է բացարձակօրէն ճշմարտին եւ « թէ գեղեցիկէն անկախ է բացարձակօրէն « օգտակարն: Ո՛չ, այդ իմաստասիրական « սխալներն ես չպիտի դործէի: Ըսել կ'ու- « ղեմ միայն թէ զործնականին մէջ կ'ը- « նենք այս սխալն ընդհանրապէս. եւ ես « կ'ուզէի որ այս սխալն այլեւս չդործէինք « մենք երբէք »:

Ի՞նչ է Եղիայի ուղածը: Եղիա, պատեհ ատիթ կը համարի պարզեւարաշխութեան հանդէսը, ուր դաստիարակներ եւ ծնողներ ներկայ են, պարզելու իր տեսակէտը, մանաւանդ աղջիկներու դաստիարակութեան հարցին մէջ: Տեսակէտ մը, որ բառաւոր եւ ուղիղ է իբրեւ զազափար: Աղջը- կանց վարժարան մը մտած ատենս, կ'ըսէ ան, կ'ուզէի տեսնել ամէնէն առաջ, ո՛չ գրատունը, ո՛չ դաշնակը, ո՛չ կարի գործիքները, - կարեւոր են ասոնք ալ, - բայց կ'ուզէի տեսնել, կ'ըսէ, աւելի, ա- լելի, մաքրութեան խորհրդանշան՝ աւելի: Ծիծաղ շարժող այս բացատրութիւնը ինքնիր մէջ շատ լուրջ հարց մ'էր: Ծրձա- նաւարտ աղջիկները եթէ պատրաստուած չեն տան համար, եթէ կը պակսի անոնց մաքրութեան զգացումը, անական տնտե- սութեան գիտութիւնը, պակասած պիտի ըլ-



լայ յաւէտ ընտանիքի համար անհրաժեշտ պայման մը:

Դրական իմաստասիրութեան հետեւող մը, արդիական միտք մը, ինչպէս էր Տէ-միրճիպաշեան, արդարեւ զարմանալի կը թուէ իր այս յանկարծական փոփոխութեան մէջ, բոլորովին դործնական եւ իրա-տես անդրադարձութիւն մ'ընելով ժողո-վորդին առջեւ: Միակ արտառողջութիւնը այդ «Աւելի ճառ»ին մէջ, ձեւն է, որով ան կը ներկայացնէ իր միտքը, եւ լեզուն՝ ռամկօրէնով խառն ու լի դուարձարանու-թիւններով, բայց զազախարն ու խորքը ոչինչ ունի արտառող, անբնական, բան-դադուական, հրապարակը աղմկելու առ-տիճան, ինչպէս կը յայտարարէին մամու-լի էջերը յաջորդ օրերուն:

Ինչպէս մուրացկան Եղիան, այսպէս նաեւ «Աւելի» ճարտասանը, ժողովրդա-կան իմաստուն մը կը յայտնուի մանա-ւանդ իր այս ելոյթով, քան թէ խելացնոր յիմար մը: Անշուշտ հիւանդ է նա, ջղերու տարապայման հիւանդ մը: Արտակեդրոն ու արտասովոր միտք մը, զգայնութիւն մը անտարակոյս. բայց հոգ է իր եղակա-նութիւնը. Տոսթոյեւսքի մը նուազ ար-տասովոր չեղաւ իր կեանքին ու զգացո-ղութիւններուն մէջ:

«Անդործութեան» չըջան անունի տակ կ'որակէր Հայ Մամուլը, մանաւանդ «Մա-սիս» շարաթաթերթը, Եղիայի այս տարի-ներուն բռնած մենակեաց ընթացքը: Վեր-լուծում (Մասիս, 1893, էջ 136) խորա-գրով յօդուած մ'ահա իրմէ, զրկուած նոյն «Մասիս» շարաթաթերթին: Հոն Եղիա կը վերլուծէ իր կեանքը: «Վերլուծմանս ա-ռարկայն երբ իմ անձն կամ իմ կեանքս «է, հաճոյքն ինձ համար կրկին է. — ո՞չ «ապաքէն վերլուծումը քայքայում է. եւ «ո՞չ ապաքէն քայքայումն իմ հոգիին «անձկագոյն տենչն եւ իմ մտքին մեծա-«գոյն պէտքն է. եւ ո՞չ ապաքէն վեր-«լուծելի ծանօթ առարկայից մէջ ինձ ա-

«մէնէն ծանօթն իմ անձն է, որ բազմա-«առարկայից վրայ բազմայօդութեան «ռաւելութիւնն ունի, շահեկանութեան «առաւելութիւնը լուեկայն իմացութեան»:

Ու կը սկսի վերլուծել իր «անդործ» կեանքը: Առաւօտեան զարթօնքէն, տա-մաքութենէն, իր ընթերցումներէն հայ և օտար պարբերաթերթերու եւ գրքերու, իր դասախօսութիւններէն, իր օրագրութիւն-ներէն բռնած՝ կ'ապացուցանէ մենակեաց գրադէտը՝ իր բազմադրաց կեանքը՝ հա-կառակ Հայ Մամուլի դատաստաններուն:

«Տարի մը կայ, գրած էր Գրիգոր Զօ-րայ, որ Եղիա Տէմիրճիպաշեան սրբո-ղած է ամէնուս հետ, մարդոց ու Աստու-ծոյ դէմ»: Եղիա այդ վերլուծումն-ին մէջ կը պատասխանէ. «Ես միշտ սրբողած եմ, Տէր Խմբագրապետ, ոչ Ձեզ հետ, այլ այն մարդոց առ հասարակ՝ որոնք կանխորո-շութիւն ունին, կամ ժխտական բացա-տրութեամբ՝ պարկեշտութիւն չունին: Իսկ Աստուծոյ դէմ սրբողած ըլլալէ հետո-ւ հոգիս ու միտքս յաւիտեան յառած են աս-Աստուած»:

«Հայրենիք» կը շարունակէ իր յարձա-կումը Եղիային դէմ՝ որպէս ետաւով գը-րականութիւն մշակողին, եւ յարձակողն է Ա. Արփիարեան: Եղիա երկրորդ յօդ-ուածով մը՝ Զարգացումն Եսին՝ (Մասիս, 1893, էջ 146), կը պատասխանէ՝ թուե-լով հին ու նոր գրականութիւններէն օր-նակներ, ապացուցանելու համար որ գը-րականութիւնը առաւելապէս մարդկային եսին չուրջ կը դառնայ ուղղակի կամ ան-ուղղակի:

Այս շրջանը Եղիայի կեանքին «անդոր-ծութեան» տարիներ չեն բոլորովին. դէ-կը մերժէ ինքը այդ որակումը: Բայց ի-րականին մէջ ջղերու ամուլ կեանք մը կը տառապեցնէր զինքը, ու ձանձրոյթի թեւերուն վրայ՝ ան կը սպաննէր ժամե-րներն հայեցութեան, ինքնավերլուծումի շրջան մ'էին, մօրը մահուան յաջորդող

այդ տարիները, իրենց արդիւնքովը աղե-տալի՝ ինքնաշարժար Եղիային համար, որ մոլորածի նայուածքներով իր առանձնո-ցին մէջ, սեւեռելով աչքերը չորս պատե-րուն եւ առաստաղին, կը խոկար ու կը խոկար:

Այն ատեն է որ իր մէջ ծնաւ կեանքի զրուանքը: Մենակ էր Եղիա իր տան մէջ, եւ այդ մենակութիւնը սարսափ կ'աղդէր իրեն. պատերուն վրայ ճերմակ պա-տանքներու մէջ փաթթուած կը տեսնէր դիրքնդիսառն իր սիրելիներուն ստուեր-ները: Այդ շրջանին մէջ գրած Մեկնակ քերթուածին մէջ կ'ըսէ նա. «Անկողինները մէկիկ մէկիկ ծրարուցան, պնակները մէ-կիկ մէկիկ վերցան, ու ձայները մէկիկ մէկիկ մարեցան. ու տունս հիմա մէկ ան-կողնեակ, ու սեղանս հիմա մէկ պնակ, ու բնա՛ւ կենդանի ձայնի մ'արձագանդ: Ես կերակուրս կ'ուտեմ ու կերակուրս զիս կ'ուտէ»:

Բայց Եղիա անկարող է խորտակել իր առանձնութեան, թշուառ մենակութեան շղթաները: Ան կը սարսափի տարիներէն որ առջեւն են, եւ տարիներէն որ դեռ պիտի չան, խելագարութեան պատկերը կը քա-րացնէ զինքը (անդ, «Մենակ»):

Անձնասպանութեան փորձերը, որ կը ձախողին, կեանքի զրուանքին զգացումը ուժգնագոյն կերպով կը փաստեն արդէն: Այս տարիներուն է հաւանաբար որ ժան-տարոյր ծաղիկներով, զոր լեցուցած էր անկողինը, ուղեց անշնչանալ Մայիսի դի-շեր մը, բայց առտուն արթնցաւ աւելի տոռոջ: Այդ անյաջողութեան վրայ փոր-ձեց Մօտա-Պուհունի ժայռին բարձրութե-նէն ձգել ինքզինքը ծով, ու այս անգամ Պէտո նաւավարը կը հասնէր փրկելու զին-քը: Այս վերջին դէպքը սակայն ծիծաղի-առարկայ եղաւ մամուլի մէջ. տոնքերո-թական արարք մը նկատուեցաւ ծովամոյն անձնասպանութեան այս փորձը: Զօհրա-յի բացատրութիւնը «Հոն՝ ուր Պէտոն կը

սպասէ...» ակնարկ մըն է դիտումնաւոր ու նախապատրաստուած ծրագրի մը, եւ տսիկա զայրացուց քիչ մը Եղիան: Սա-կայն ստոյգ է որ տարաբախտ բանաստեղ-ծը իրապէս զրուած էր կեանքէն, զրուած իր ձանձրոյթներէն, իր եսէն:

Եղիա հուսկ վճռեց լքել Գատրդիզը, եւ երթալ առանձնանալ Հասդիզը իր նախ-կին բնակարանը, ազատելու համար իր հալածիչներէն, զրպարտիչներէն՝ որ չէին դադրեր զինքը հետապնդելէ: 1893-ին ար-դէն փոխադրուած է հոն, բայց միշտ նոյն միայնութիւնը, նոյն տրամուլիւնը իր հո-գիին մէջ: Հալածանքի խելագարութիւնը հետզհետէ կը զօրանայ: Հասդիզի մէջ ալ իր երեւակայութիւնը կը յարուցանէ նոր թշնամիներ. բարեկամութեան ո՛ր եւ է նը-շան՝ թշնամութեան ապացոյցներ են իրեն համար: Կը ստիպուի 1895-ին թողուլ համար: Կը անցնելու համար Բերա, ա-ռանց հաստատ որոշած ըլլալու թէ ուր պիտի իջեանի. օր մը ամբողջ ձիւնի տե-ղատարափին տակ թշուառ Եղիան տուն կը փնտռէ: Իրիկունը ոստիկան մը կ'առաջ-նորդէ մոլորուածը «Պէքեարլար Խահվէ-սի» մը: Կը ցնցուի Եղիա ի տես այս նոր միջավայրին, ի տես այդ վայրին մէջ ափ առնող բազմութեան: Նոյն գիշերը կ'ա-ռաջնորդուի վատահամբաւ Ասմալը Մէս-ճիտի փողոցին տուններէն մէկուն դուռը դարնելու: Այրի տիկին էլէն Նիսընի դուռն էր որ կը դարնէր: Այրին կ'ընդունի զայն մօր մը պէս, կը դուրսգորայ վրան ու կ'աղատէ թափառումէ:

Տարիներ վերջ, ազգային հիւանդանո-ցին մէջ զրուած արձակ էջ մը՝ որ լի է համակ բանաստեղծութեամբ, Յիշատակ մը խորագրով, սրտառու չեչուով կ'ան-դրադառնայ իր այս գտած ասպնջականու-թեան:

«Եօթը տարի, եօթն անգամ ինձ պաշ-«տելի դո՛ւ կին, եօթը տարի անցաւ ար-«դէն յաւերժայուշ այն գիշերէն ի վեր,

« ուր դուռը դարկի, դուռակներով որ սըր-
« ախ մը դուռն ալ էր այն: Ա՛հ, ինչո՞ւ
« դարկի դուռը, դեղ ինչո՞ւ ճանչցայ,
« դեղ ճանչցած է՞ր չմեռայ, եօթն ան-
« դամ ինձ պաշտելի դո՛ւ կին: »

« Օրն ի բուն սենեակ փնտռած էի,
« ձիւնին տակ որ անընդհատ տեղաց այն
« օր մինչեւ իրիկուն: Ծանապարհո՞րդ
« մէն էի: Կէս ժամ միայն տեւած էր ճա-
« նապարհորդութիւնս, ծննդեանս թաղէն
« մինչեւ Բերա: Սակայն հեռագրոյն եր-
« կիրներէ հասնող ուղեւորէն աւելի խոն-
« ջեալ էի: Հօրենական տան հինգ տար-
« ուան ամայութեան ահադին բեռն ուսիս
« վրայ կը կրէի: »

« Հօրենական տունէն վերջին բաժնու-
« զը հօրենական տան առաջին հրապոյցին
« եղած էր, մա՛յրս որ ինձի քոյր մը կը
« թուէր: Ու մա՛յրս կ'ողբայի, ու մա՛յրս
« կը փնտռէի հինգ տարիէ հետէ: Զոհա-
« բերութեան յօժար հրեշտակը կը փրկու-
« ուէի, երբ դուռը իմ առջեւ բացուեցաւ
« ա՛յն մութ դիւղին, որ ինձ՝ ձիւնածա-
« ծուկ՝ ուրուականի՝ մ'երեւոյթը կ'ընծա-
« յէր: Սե՛ւ՝ մինակ աչքերս կը մնային
« բովանդակ մարմնոյս վրայ: սեւ մը՝
« նուազո՞ւն այժմ, քանդի քառորդ դար
« մեկան դողցես ու մեկամաղձութիւն հայ-
« թայթած էր իմ դրութեանցս ասիկայ »
« (Մասիս», 1902, Յունիս 29): »

Սրտերը կը կապուին իրարու, փոխա-
դարձ համակրութիւն մը կը ստեղծուի ա-
ռաջին դիւղերն իսկ: Էլէն Նիսրն կ'ըլլայ
Եղիայի խնամակալութիւն մինչեւ անոր
մահը, հակառակ անոր խստերախ, մշտա-
պայքար, դառնութեամբ լի նկարագրին:
Գրադէտին բարեկամներուն մէջ չէր մը
կ'անցնէ այս երկուքին միջեւ զոյացած
մտերմութեան շուրջ: Խորհրդաւոր է իս-
կապէս այն օտար կնոջ, Նորվեկահայտակ
հունդարութիւն մէջ սէրն ու համակրան-
քը Եղիային հանդէպ: Զարուհի Գալէմ-
բարեան կը բանայ այդ խորհուրդին ծալ-

քը, քաղելով նոյն ինքն էլէն Նիսրնի բեր-
նէն (« Եղիա Տէմիրճիպաշեան », Անահիտ
1931. Յունուար - Ապրիլ, էջ 108-109):
Այրին իր վաղակորոյս ամուսնոյն պատ-
կերը, նկարագրիւրը դոտած էր Եղիայի մէջ:
Իր ցաւին անհունութեան տակ ընկճուած
երբ բախտը իր դէմը հանած էր ուրիշ
մէկը, որ կը յիշեցնէր իր ամուսնին, իս-
կոյն զգացած է իր մէջ բնական համա-
կրութիւն մը, ու զոհած ինքզինքը խնա-
մելու դայն, ոչ անշուշտ բոլորովին ճիշտ-
բար, վասնդի Եղիա իր հարուստ Տիկի-
Ներսէսեան մօրաբոլմէն կը ստանար ամ-
սական նպաստ մը:

1895-ի ձմեռն եղանակին է որ կը պա-
ռահի այս հանդիպումը: Տան մը եւ խը-
նամակալութիւն մը դիւար մեկնամու Եղիա-
յին հողոյն վրայ չէն բերեր ոչ մէկ իրա-
կան փոփոխութիւն: Ան կը շարունակէ
ապրիլ իբրեւ կենդանի մեռեալ մը մտային
խանդարում առողջութեամբ, որ չի թոյ-
լատրեր իրեն դրաղելու լրջօրէն դրակա-
նութեամբ: Այս շրջանիս միայն քանի մը
քերթումներ, ինչպէս Հրայր Բալթի-
նով ընդ Աստուծոյ, կ'երեւան իր գրչին
արդիւնը, որոնց մէջէն կարելի է գտնել
անոր վրդովեալ հոգին: Ատոնք դեռ տկա-
րով մը կը կապեն զինքը դրականու-
թեան:

ԵՂԻԱ Կ'ԱՆՑՆԻ ԵՒՐՈՊԱ. - ՎԵՐԱԳԱՐՁԸ
ՊՈՒՐՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՃԱՌՈՒԹԻՒՆ
ՆԵՐԸ. - ԵՂԻԱ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՒ
ՑԻՆ ՄԷՋ. - ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՄԱՀԸ

Եղիա 1897-ին կը լքէ Պոլիսը մեկնելով
դէպի Եւրոպա: Այդ ճամբորդութիւնը փա-
խուստ մ'էր Տիկին Էլէն Նիսրնէն, որուն
հետ դժուար էր օր մը, յետ երկու տարի
բնակակից ըլլալու, եւ մանաւանդ փա-
խուստ մը Պոլսոյ թշնամի միջավայրէն,
չնչակեաններէն, թուրքերէն եւ բոլոր ե-

ղած ու չեղած հալածիչներէն: Զարհու-
րելի մտասեւեռում մը տարաբախտ բանա-
ստեղծին:

Եղիա դրականը սանդիւմ մը պիտի չունե-
նար, եթէ իր մօրաքոյրը Տիկին Ներսէս-
եան չհողար ծախսը այդ ուղեւորութեան:
Անհրաժեշտութիւն մը եղած ըլլալու է այդ
փախուստը, որ ստիպած է զինքը ձեռք
կարկառել Ներսէսեաններու, ինքը որ
միշտ խուսափած է գիմել անոնց իր ա-
մէնէն նեղ օրերուն, եւ նոյնիսկ կոպտօրէն
մերժած է ենթարկուիլ անոնց խնամքնե-
րուն:

Զուիցերլանդ կ'ըլլայ առաջին կայանը իր
ուղեւորութեան: Կը սիրէ Ժընևը, Լեմա-
նի լիճը, Ալպեաններու վեհութիւնը, բայց
այդ ապրումները չեն ըլլար իսկական հո-
ղեղբաւիչ վայելքներ: Հալածանքի ահու-
ղողը կը տառապեցնէ զինքը ամէն տեղ.
պանդոկապետներ, անցորդներ, նոյնիսկ
աղջիկներ կը ծաղրեն զինքը, կը զրպար-
տեն, կը հայհոյեն իր անունը, ամէնքը,
ամէնքը կը հալածեն զինքը անընդհատ:
Զկայ հանդիստ իրեն համար վոստիօրէն
մինչեւ Լեմանի ափերը, մինչեւ Դանուբի
եւ Հոնոսի երկայնքը, միշտ կայ մէկը
իւր դէմ՝ որ կը խոցէ, կը հարուածէ իւր
սիրտը:

Զուիցերլանդէն կ'անցնի Վիեննա ու
կ'ենթարկուի «Ալիէմայնէ Գրանէն Հա-
ուս»ի մէջ ջլախտարան փրօքէսորի մը
խնամքներուն որ կը յորդորէ ման դալ ա-
ղաօրէն, ու մաքուր օդ չնչել: Պրանց
Եօգէֆ կայսեր յանձնարարութեան վրայ
է հաւանաբար, որ տեղի կ'ունենայ այս
է հարմանումի պարագան: Եղիա կայսեր
խնդրագիր մը ուղղած էր հայցելով իրմէ
օգնութիւն Վիեննայի պանդոկապետին
հալածանքներուն դէմ: Խնդրագիրը կը
պարունակէր սկիզբը Հապսպուրկեան ար-
քայական Տան պատմականը, եւ որուն կը
քայակա Տան պատմականը, եւ որուն կը
կցուէր թախանձանքը ազատելու զինքը:
Կայսրը փութով կը հասկնայ թշուառ դը-

րագէտին մտային կացութիւնը եւ արքու-
նի պաշտօնեայ մը կը զրկէ զոհացում տա-
լու զխնական հայուն:

Սակայն անօգուտ. Եղիա կը լքէ քանի
մը շաբաթէն Վիեննան ալ, անցնելու հա-
մար Հունդարիա, կ'այցելէ Պուտարեշտը
ու կը փութայ վերադառնալ Պոլիս: Այս
է ահա ամբողջ Եւրոպայի հմայքին ար-
դիւնքը իր մտքին վրայ: Թողած Բարիդն
ու Հոռմը, զոր ուրիշ մէկը պիտի ուղէր
ամէն դնով տեսնել եւ ուսումնասիրել,
ինքը վոստիօրի եւ էլէն Նիսրնի կարօտով
չունէր կ'առնէ իր ծննդավայրը:

Կը վերադառնայ ուրեմն Եղիա Տէմիր-
ճիպաշեան բնակելու վերստին իր խնամա-
նի լիճը, Ալպեաններու վեհութիւնը, բայց
կը դառնայ իր նոյն հիւանդ մտքով, որով
մեկնած էր, բայց թեթեւ փոփոխութեամբ
մը եւ վերստացում կամքով աշխատելու:
«Մեր Պոսթորը» զգացումի էջ մըն է դըր-
ուած ճամբուն վրայ կամ վերադարձին,
ուր անկեղծ է սէրը, պաշտամունքը Վոս-
տի աննման գեղեցիկութեան հանդէպ:
Վոստի աննման գեղեցիկութեան հանդէպ:
Այդ դրուածքը երեւցաւ «Բիւզանդիոն»ի
մէջ առաջին անգամ, եւ ուրիշ թերթեր
զայն արտատպեցին յետոյ: Եղիա կը սկսի
շարքը իր յօդուածներուն գրելով բոլոր
թերթերու մէջ: Բիւզանդիոնէն, «Բիւ-
զանդիոն»ի խմբագրապետին հանդէպ իր
հալածանքեալ շաղկապութիւնը՝ որով
կը համարի զայն իրապաշտ հոսանքին ու-
հահողը (անտեսելով «Արեւելք»ի կատա-
րած գերը), անոր վերադրելով 1889-
1894-ի շրջանին լաւագոյն դրողներու
պատրաստութեան արժանիքը, կը սրդո-
ղեցնէ զրական հրապարակը: Բողոքի ձայ-
նը կը բարձրանայ այս անգամ երիտա-
սարդ դրողի մը կողմէն: Արամ Անտոն-
եանն է որ Բաց նամակով մը «Մասիս»-ի
մէջ (1899. թ. 8-9) մեծ գրադէտին դէմ
դատ կը բանայ: «Մասիս»-ի խմբագրու-
թիւնն էր որ Արամ Անտոնեանի բերնով կը
բողոքէր: Եղիայի մը դէմ այդպիսի արարք

մը անվայել էր: Ան ունէր անշուշտ իր դիւրագլուխութիւնները, իր պատճառները Պոլսոյ ամէկէն պաղ քերթը անուանելու «Արեւելք»-ը եւ Բիւզանդ Քէչեանի վերադրելու արժանիք մը՝ որ Արփիարեանի, Գր. Զօհրապի վերադրելի էր, իբրեւ իրապաշտ հոսանքին ջերմ պաշտպանները եւ ուսուցիչները նոր սերունդին: Բայց Եղիա անցեալին մէջ կրած էր յարձակումներ «Մասիս»-էն, եւ հիմա տխուր յիշատակ մը կը բռնէր իր ձեռքը: Անոնք թէեւ յարձակումներ չէին, այլ աւելի խնդրանքներ եւ համակրական պահանջներ՝ որ Եղիա չէր գրել, արդար ու սիրելի պահանջները հասկնալ իրենց ճիշտ ու անկեղծ ձեւին տակ: Ու այժմ որ Եւրոպայէն դարձած, կը զգայ տենչ մը վերստին դրելու ձեռք առնելու, «Բիւզանդիոն»-ն է որ գլխաւորապէս ընդ առաջ կու գայ բանալու իր էջերը: Բնականաբար Եղիա ալ փոխադարձ պիտի կատարէր իր պարտքը կամ «Բիւզանդիոն»-ի խմբագրապետին, հակառակ ձեւացած ընդհանուր դադարիին՝ թէ Բիւզանդ Քէչեան «տափաւորութեան» ներկայացուցիչ մ'է պարզապէս, անկարող գրագէտ սերունդ մը պատրաստելու:

Արամ Անտոնեանի բաց նամակ-ին հանդէպ, որ քիչ մը տղայական է, Եղիա վրասեմ կեցուածք մ'ունի. լայն հայեացքով կը մօտենայ հարցին, արեւմտեան տեսակէտներ եւ դարդացման պայմաններ որոնհաստական մասնաւորումներու: Գրամարտ (Մասիս, 1899, թ. 10) տխուր կը կրէր Եղիայի պատասխանը. երկրորդ յօդուածը դարձեալ Գրամարտ (անդ, 1899, թ. 11), բայց իր մասնաւորեալ խորագրով «Մեղայ, Տէր» աւելի մեղադիր մըն էր, ոչ թէ Արամ Անտոնեանի ուղղութեամբ, այլ Աստուծոյ. նարեկեան հեղեղաթափին նմանող բան մը՝ որ Եղիայի

հոգւոյն տրտմաթաւալ անդունքը կուտայ. «Տէ՛ր, մեղայ՝ Գեղ: Եւ ատո՛ր հա՛» «մար ինձ ուղղութեամբ բոլոր նախատինքներն այնքան տարիներէ հետէ. անո՛ր համար ինձի տրտած չարչարանքները «ձեւաղան» որոնք առողջութիւնս խանգարեցին եւ որոնց տակ կրնար ընկճուիլ «մարմինս արդէն վատոյժ. անո՛ր համար «մեծերուն արհամարհանքն ու փոքրերուն «ծանականքը, սոցա խանդանքը, դոցա «խարդաւանանքը. անո՛ր համար թափառական կեանքս օթեւանէ օթեւան եւ «ոստանէ ոստան. անո՛ր համար անցքս «ու յաճանքս թերթէ թերթ ու թառէ թառ «անդադար: Անո՛ր համար այս ամէնը, «քանզի Քեղի դէմ մեղանչեցի եւ Տէր: «Մեղա՛յ...»:

Կրօնքի ու Աստուծոյ դէմ մղած իր մըտաւոր ու դրաւոր պայքարին պատուհանը կը համարի Արամ Անտոնեանի անձնայարձակումը իրեն դէմ: Բայց այդ յարձակման դէմ՝ ի՞նչ վսեմ է պատասխանը Տէմիրճիպաշեանին, որ իր ամբողջութեան մէջ արժանի էջ մըն է մեծ խորհողին, մեծ գրագէտին եւ մեծ տառապողին: Այդ էջը կը բաւէ Եղիան հասկնալու, Եղիան զնահատելու համար: Կը խորհիմ թէ կեղծիք մը չէ Տէմիրճիպաշեանի այդ գրութեան, եւ տօնքիւթութեան հարց չի կրնար ըլլալ, ինչպէս Արամ Անտոնեան իր «Բաց նոր երեսին. «Մեր ամէնէն սթիլիսթ գրագէտը ըլլալնուդ հետ, մեր ամէնէն ալ Տօնքիւթ գրագէտն էք. կարելի չէ երեւակայել գրող մը, - ո՛ւր որ ալ ըլլայ, - որ ձեզի չափ դովէ ինքզինքը, ձեզի չափ երեւակայական թշնամիներու վրայ յարմար կը պարտիք ուղղակի այս պարագային, զոր մինակն չէր որ պիտի հաստատէի»:

Երկու ամիս վերջ Եղիային դէմ ուրիշ յարձակում մը, զնահատականին յաջոր-

դող խիստ քննադատականով, եւ քիչ մ'ալ փոքրողի տողերով, ուր կարծես անձնական վիրաւորանքներու դերադրուածի մը շեշտն ալ կը զգացուի: Արտաշէս Յարութեանն է այս անգամ ռազմիկը՝ որ կը ձակաւորի անոր դէմ իր «Գրական Դիմաստութեան»-ու շարքին մէջ: Հոս ալ կը հարուածուին Եղիայի փառատենչիկ ձրկատմաները, արտայայտութեամբ մը՝ որ վիրաւորիչ է. «Անտոնեանի եսամոլ մը, զաւելտական ունայնամիտ մը, եւ եզկելի ինքնագով մըն է. չափէն աւելի դիւրադրած է ոչքրամին նկատմամբ եւ անսահման սէր ունի մեծադիպող փողարութիւններու համար, բաներ՝ որ ապահովաբար չառ վնասած են ու պիտի վնասեն զեռ իր բարի համբաւին որ նախապաշարում մըն է իր կարգին» (Մասիս. 1899, թ. 15): Ու այսպէս կը ցածնայ յօդուածագիրը բացասական շեշտին ուժեղ զարկերով, կարծես յայտնի ճիգով տապալելու հին համբաւ մը, նախապաշարում նոյնիսկ զայն կոչելով: Բայց ինչո՞ւ այս փոքրերուն, այդ ժամանակաշրջանի գրական հրապարակին վրայ տակաւին անուն մը չդարձած այդ փոքրերուն կանչն ու աղմուկը մեծի մը դէմ, որ մնաց ապագային ալ միշտ մեծ, մինչդեռ իրենք մնացին ինչ որ էին: Արտաշէս Յարութեանն միջակութիւն մ'է թէ՛ իբր ստեղծագործող բանաստեղծ եւ թէ՛ իբր արձակագիր, որուն բովանդակարտադրութիւնը Եղիայի մէկ սիրուն ու ներշնչեալ պատկերին հետ չէ կարելի փոխել:

Ունէր անշուշտ Եղիա իր մեղքերը, զրաւան անկումները, մեղամաղձութեան եւ մեղամոլութեան հետ՝ նաեւ փառասիրութիւններ, իր մեծութեան ինքնադիտակցութեան պէս բան մը, բայց այդ ամէնը նկարագրի թերութիւններ են, տարրեր՝ որ պէտք են անջատուել իր գրագէտի արժանիքէն: Իր լաւագոյն էջերը անդերադանցելի նշը ունին իր ժամանակակիցներուն

վրայ: Իր մեղքերը չառ էին անշուշտ իբր մարդ, իբր խառնուածք, բնաւորութիւն, միշտ անհաստատ, անհանդարտ, կասկածոտ ու մանաւանդ հալածանքի խելագարութեամբ իր շուրջը աղմկող: Երկրագունտ-ի եւ Գրական ու Իմաստասիրական Շարժում-ի դադրելէն վերջ՝ դառնացած ոգի մ'էր ան, սաստկացած մանաւանդ կեանքի ուրիշ ողբերգութիւններով՝ որոնց մէջ ապրեցաւ. մեծամտութեան հիւանդութիւնն ալ եկաւ աւելցնելու իր անհաշտ նկարագրին վրայ ուրիշ դժուարութիւն մը՝ խանդարելով անոր ընկերային ու բարեկամական յարաբերութիւնները: Այդպիսի Եղիայէ մը, որուն հոգւոյն հրաբուխը դեռ իր եռեփուն վիճակն ունէր, ի՞նչ պէս կարելի էր պահանջել մեղեդական լըռութիւն մը. խենթ, կատաղի ժայթքումներ կային դեռ իր մէջ, անոնք ալ պիտի պոռթկային, հոգ չէ թէ ցնցելով զգացումները եւ գրգռելով փափուկ, զգուշաւոր եւ նաեւ բանաւոր մտածելակերպերը: Ինքը մոլեղին մը, հակասական մը ինքնիր մէջ, այդպէս ալ պէտք է դատուիլ, ըմբռնուիլ, եւ ոչ թէ վարկաբեկուիլ իբր արժանիք, ինչպէս Արտաշէս Յարութեանն մը եւ ուրիշներ ուղեցին ընել: Յովհաննէս Գալանճեանն ալ, դաւառական գրականութեան մշակներէն մին այդ օրերուն, գրեց Եղիային դէմ Գրչի անկումը խորագրով (Մասիս, 1899, թ. 16-17), սակայն առանց հին համբաւ մը տապալելու ընդունայն ճիւղերու, այլ լոկ յորդորելու համար հիւանդը՝ որ լռէ, որ հրապարակի վրայ իր անունը չաւրէ:

1901-ի Փետրուարին Եղիա կը փոխադրուի Աղդային Հիւանդանոցը: Բռնի փոխադրութիւն մը: Իր մտային հիւանդութիւնը կը յուսային բուժել այսպէս անոնք՝ որ այդ դադարաբեր ունեցան յանձնելու զինքը բժիշկներու խնամքին: Ընդունայն փորձ մը եղաւ ատիկա, որովհետեւ Եղիա հիւանդանոցին մէջ աւելի տառապեցաւ:

Միջավայրի փոփոխություններ, սակայն, զրգուկներ երեւակայութիւնը, ու ան արտադրեց կարգ մը արձակ էջեր. այսպէս Դարամորոգ օրագիր (Մանգումէի էֆ-բար, 1901, թ. 62), Հիւանդ էի, եկիք տեսիք զիս (Մասիս, 1901, թ. 8), Յիշատակ մը (Մասիս, 1902, թ. 26), զորովի եւ երախտադիտութեան արտայայտութիւններ, ուղղուած իր բարերարութիւնը՝ զոր «Գթութեան ճամբարի քոյր» կ'անուանէ: Փիլիսոփայութեամբ ու զրական հարցերով ալ կը զբաղէր Եղիա իր հիւանդի անկողնին վրայ, որովհետեւ չի համակերպիր թէ պէտք է ինքը հիւանդանոցի մը նեղ պատերուն մէջ ամփոփուի: Ընկերային իմաստասիրութիւն (Մասիս, 1901, թ. 13), Բարեշրջութիւն գեղեցկիւն (անդ, 1901, թ. 11), Վարդէն Աստուած (Անդ, 1901, թ. 29), Նորավիպակ (Անդ, 1901, թ. 20, եւ 21), Արուեստի եւ բարոյականի խնդիրը՝ նորավիպի առթիւ (Անդ, 1901, թ. 24), Վերջիշում մը՝ առաջին գրութիւնս եւ առաջին հրատարակութիւնս (Անդ, 1901, թ. 15), Առեղծուածք քերթուածը (Անդ, 1901, թ. 26), Իմ ետնաքիւն քերթուածը (գրուած 8 Մայիս, 1901, եւ հրատարակւած, 1902, թ. 29) ապացոյցներ են թէ Եղիա հիւանդանոցը զրականութեան սրահի մը վերածած էր: Հանդարտ ու լուսաւոր պահերու արտադրութիւններ են ասոնք, ինչպէս նաեւ «Մանգումէի էֆբար»-ի մէջ լոյս ընծայուած Մայսալեքի զրուածքը, Փոքորիկը նորալէզու, եւ ուսումնասիրութիւն մը է. Զօլայի մասին:

Այս երջանիկ պահերէն դուրս, Եղիա մտասեւեռ, յաւերժական հալածուածն է, որ ժամերով պարապութեան յառած իր խոռոչացած աչքերը, պաշարուած ըստուերներով, կը խօսէ, կը վիճէ, կամ լուռ՝ կատաղած շրթներով կը տաղնապի ու կը զարարուի ինքնիր մէջ, քրտնաթոր ու զիտախիւ, կարեկցութիւնը չարժեքով բոլոր ներկաներուն. խելակորոյս ու մտա-

ցիր, ողորմելի էակ մը դարձած՝ որ իր երեակայական թշնամիներու հալածանքէն ազատելու համար կը դիմէր նոյնիսկ Որբանոցի թշուառ փոքրերուն, դամէնքը ծիծաղեցնելով իր վրան: Կատաղութեան պահերուն չորս բազուկներ անգամ անկարող էին դապելու զինքը. կռուի ու հարուած կ'իջեցնէր հանգիստողին, բժշկապետին կը դանդաղէր արուած կերակուրներուն համար, ու անոր առջեւ կը թափէր իրեն բերուած կաթը իր «հոտած», հրապարակային ճառեր կը խօսէր որբերուն, հիւանդապահներուն զիմաց, երբեմն նոյնիսկ անպատշաճ նիւթերու վրայ՝ ինչպէս Ունանականութեան վրայ: Ասոնց կը յաջորդէին զայրոյթի արտայայտութիւններ՝ աշխարհի, կեանքի, բնութեան եւ Աստուծոյ դէմ, երբ այլեւս կորսնցուցած կ'ըլլար իր զիտակցութիւնը: Անդապելին, կ'ունենար պահեր ալ, բոլորովին պարտքուած ինքնիրմէն. հետապառ իր մարտնչութենէն, եղիկիւրէն դողահար իր անձնապայքարէն, միջեւ որ ա'լ ուժասպառ ամփոփուէր երկար ժամեր մունջ մենախոհութեան մէջ: Այսպէս անցուց այդ քանի մը ամիսները, իրեն դառաղեղի մէջ բանտուած, ու օր մըն ալ բժիշկները, ուղելով յանձնել զինքը լայն օդի ազատութեան, յայտարարեցին որ Եղիա առողջացած է: 1901-ի Սեպտեմբերին սկիզբը Եղիա կ'ըլլէր հիւանդանոցէն այնպէս ինչպէս մտած էր:

Այնուհետեւ իր կեանքը անընականն, տարապայման կերպով ողբալի, եղաւ քաշկոտուք մը դէպի ահաւոր վախճանը: Մարդերէն, օղէն, լոյսէն խուսափող՝ անսոսնաճնացած իր խղիկին մէջ, դարձած կմախք, ճերմակ մաղերով մարդկային ուրուական մը՝ տառապեցաւ եւ տառապեցուց նաեւ էլէն Նիսընը, որուն համբերատարութիւնը Եղիայի անոպայ վերաբերմունքներուն եւ արտաոտցութիւններուն, քիչ մը անբացատրելի կը մնայ, եթէ

չխորհինք որ անորմալ հոգի մ'ալ ինքն էր, համակրած իրեն նման ուրիշ խենթի մը:

1904-ին ինքնակամ մտաւ անգամ մ'ալ Ազգային Հիւանդանոցը, ուսկից դուրս նետուել կը թախանձէր առաջ: Իր տարտամ եւ թոյլ կեանքին, իր պղտորած մեղքին որոշողութիւնն էր այս, թերեւս միջավայր փոխելու, թերեւս կրկին փախչելու իր բարերարութիւնը հրեշտակէն: Սակայն չէր ենթարկուէր բժշկական խնամքներուն. անանունդ, կորաքամակ, ինկած մարմին մը, քամուած անկողին, ցնորական բանդաղուչանքներու խաղալիք, մօրը ստուերովը շարունակ տանջուած՝ իլլելով անոր սա խօսքը, իրեն անէծք մը. «Տղա, գրող եղար, անթի պիտի մեռնիր», Եղիա կը սպաննէր իր երիտասարդութեան ամէնէն թանկագին տարիները: Կ'ըլլէր դարձեալ հիւանդանոցէն: Էլէն Նիսըն կը թափէ իր յետին ճիւղերը տարաբախտ բարեկամին վերջին տարիները քաղցրացնելու, սակայն անօգուտ: Եղիա իր իսկ ձեռքով կը խզէ կապը մօռյալ աշխար-

հէն՝ կախելով ինքզինքը 1908, Յունիս 19-ին, իր սրտապանութիւն բացակայութեան մէկ պահուն:

Կրօնական իշխանութիւնը թոյլ չտուաւ որ անձնասպան բանաստեղծը թաղուի գերեզմանատան պատուաւոր անկիւն մը. պատի մը տակ միայն կ'ամփոփուէր տապալեալ մարմինը չքեղ յուղարկաւորութեամբ: Իր դադաղին վրայ Լեւոն Էսաճանեան կարդաց ողբ մը, դամբանականներ խօսեցան Թէոդիկ եւ Տիրան Չրաքեան ի ներկայութեան Պոլսոյ զբաղէտ դէմքերուն, բոլոր ծանօթներուն եւ ազգականներուն, հրապարակագիրներուն, զրաւաճառներուն, զպրոցական աշակերտներուն: Տիկին էլէն Նիսընը նուիրեց ամէնէն ճոխ ծաղկեփունջը եւ ամէնէն անկեղծ լացողը եղաւ: Մինաս Չերազի միջնորդութեամբն է որ Եղիէ Դուրեան պատրիարքը, տարի մը վերջ, հրաման տուաւ զերեզմանատան ամփոփ տեղ մը փոխադրելու մարմինը, որուն վրայ էլէն Նիսըն շինել տուաւ 1909-ին դամբան մը հետեւեալ արձանագրութեամբ.

D

E Ե Ղ Ի Ա Տ Է Մ Ի Ր Ճ Ի Պ Ա Շ Ե Ա Ն Sous cette terre Repose le bien-aimé Et éternellement regretté Elia Démirdjibachian Célèbre poète Et philosophe 1909, Novembre 8-21	D Ce monument A été élevé A sa mémoire Par son ange gardien M.me Hélène V.ve Nissen Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ (Շարունակելի)
---	--